

25 948

32-1
CA 34

ԻՆՉ ՓԻՏԻ ԻՄԱՆԱ
ԽԱՆՈՒԹՅԱՅԻՆ ՀԱՆՉԱԾԱԳՈՎՐԴՅԱԿԻ
ԱՄԵՆ ՄԻ ԱՆԴԱՄ

ՎԻՃԱԿԱԿԱ
ԻՆՍՏԻՎՈՒԴ
ՊԵՏՈՒԽԱՅԱՆ
Ակադեմիա Խաչ
СССР

ՅԵՐԲԱՆԿՈՂՄԻ ՀՐԱՄԱՎԿՈՒՔՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ

1930

334. S

h-61

3345

26 APR 2013

11-61

25948

05 JAN 2010

ԽԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՉՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

1. Հետևել խանութային աշխատանքին, խանութի ինչպես ներքին, նույնպես արտաքին սարքավորման:
2. Խիստ կերպով հետևել մաքրությանը՝ խանութի դուրսը, ներսը և աշխատողների միջանցքը:
3. Ամեն որ անցնել խանութի պահստը, ուշադրություն դարձնելով մաքրության և ապրանքների դասավորման գործին:
4. Հետևել վոր ապրանքները ստացվեն ժամանակին ու տեսակավորվեն: Պիտի ստուգել ստացված ապրանքնե-

ՊԵՏՀՐԱՏԻ 2-ՐԴ ՏՊԱՐԱՆ

թի վորակը: Վասորակ լինելու դեպքում իրավունք ե վերապահվում խառնությային հանձնաժողովին դադարեցնել փշացած ապրանքի վաճառքը: Ապրանքները կարող են լինել փշացած (հոտած, վորդնած, կեղուոտ և այլն): Նման դեպքերում պիտի արձանագրել, թե տվյալ ապրանքը վոր որն ե ստացված, ինչ ֆակտուրայով, ապրանքի քաշը, չինը և ազամանը մտնեամասն գրել թե ապրանքի լինչն ե փշացած:

Կարող են լինել յերկու տեսակի փըշացումներ:

1. Բըակի, վոր ծախել չի կարելի.
2. Կիսաբըակի, վոր ծախել կարելի յեկինն իջեցնելուց հետո:


Դինն իջեցրած ապրանքի մասին հայտարարություն պիտի փակցնել խա-

նութի աչքի ընկնող տեղերում: Հայտարարության մեջ պիտի ցուց տալ թե իջեցված ապրանքի գումարն ինչ տոկոսն ե կազմում կամ վորքան արժեքը այդ ապրանքը նախ քան իջեցումը և իջեցումից հետո:

4. Խանությային հանձնաժողովի կողմից բրակ արած ապրանքը կարող ե չճանաչվել վարչության կողմից. այդպիսի դեպքում պիտի հրավիրել հատուկ բժշկական եկամուտ:

Ծանոթություն.— Խանությային հանձնաժողովները կարգադրելու իրավունքներ չունեն, նրանք իրենց ցանկություններն ու առաջարկներն իրագործում են վարչության միջոցով:

6. Պիտի պարտավորեցնել, վոր բո-



լոր ապրանքների վրա գները նշանակված լինեն. այդ կարեոր ե նրա համար զոր մի կողմից՝ հեշտացնում ե հաճախորդի գործը, ազատում ե նրան հերթի կանգնելուց, և միուս կողմից՝ հեշտացնում ե գործակատարի աշխատանքը: Բացի այդ, հեշտացնում ե խանութային հանձնաժողովի ստուգման աշխատանքները (ֆակտուրայով գները ստուգելու տեսակետից):

7. Ամենախիստ կերպով հետեւ, վոր գների խախտումներ չլինեն. ուրիշ խոսքով՝ ապրանքները վաճառվեն վարչության կողմից նշանակված գներով:

8. Հսկել չափ ու կշռին, ինչպես և կշռաքարերի կանոնավոր լինելուն:

9. Պիտի աշխատել հարմարություն գտնել նախնական կշռումն իրագործելու նպատակով:

Խիստ հետեւ ընկերության անդամներին պատկանելիք նորմայի ճիշտ կիրառմանը՝ բանվորների հասանելիք ավելի մթերքների, ինչպես և յերեխաների լրացուցիչ մթերքների բաշխման գործին:

10. Ընդունել բողոքներ հաճախորդներից: Բողոքները լինելու գեպքում, անհրաժեշտ ե մանրամասն արձանագրել բողոքի իմաստը, գանգատվողի աշխատանքի կամ տան հասցեն ու յեզրակացության հետ ներկայացնել վարչության կազմբաժնին:

11. Հետեւ թե վորքան կորեկտ են մերաբերվում աշխատակիցները գեպի հաճախորդները — լինեն ընկերության անդամ կամ վոչ, այդ միևնույն եւ:

Նույնը պիտի պահանջել նաև հաճախորդներից:

Նախազգուշացում. — Շատ ե
պատահում յերբ հաճախորդը բողո-
քում ե, թե այս ինչ աշխատակիցն
անպետք ե:

Մեծ մասամբ այդ լինում ե հետե-
վանք այն բանի, վոր աշխատակ-
ցին մի բաժնից փոխադրում են
մի ուղիղ բաժին, վորին նա լավ ծա-
նոթ չե, որինակ՝ կանդիտերիայի
մասի հմուտ աշխատակիցը կարող
ե անպետք դառնալ հաճախորդի աշ-
քում մթերային մասում, կամ գաս-
տրոնոմ և այլն. մեծ մասամբ այդ
կատարվում ե կամ սովորելու էամ
աշխատակիցների պակասության
հետևանքով. սովորելու ընթացքը
չպիտի դասավորել այնպես, վոր
զուգադիպի առևարի յեռուն ժա-

մերին, պիտի աշխատել աշխատա-
կիցների կայուն շտատ ձեռք բե-
րել:

Հոսող, անկայուն շտատի հետևան-
քով, բողոքների թիվը շտատ ե լինում:

12. Պարզել թե վորքան ե համապա-
տասխանում անդամների կարիքներին
ու պահանջներին ապրանքների ասոր-
տիմենտը (տեսակները): Այս նպատա-
կով, պիտի խանութի աշքի ընկնող տե-
ղերում կախել տեսր, վորտեղ արձա-
նագրության յենթակա պետք ե լինեն
բացակայող ապրանքները և դժգոհու-
թյունները՝ խանութում վաճառվող ապ-
րանքների մասին, բացառությամբ դե-
ֆիցիտային ապրանքների:

13. Անհրաժեշտ ե պարզել թե վորքան
հարմար ժամերին ե բացվում խանութը

հակառակ պարագայում հարմարեցնել
բացման և փակման ժամերը՝ համաձայ-
նեցնելով վարչության հետ:

14. Հաճախ վարչությունը կամ վեր-
ստուգիչ հանձնաժողովը տալիս են վո-
րոշ հանձնարարություններ՝ կազմել փը-
չացած ապրանքների ակտեր ապրանք-
ների ցուցակագրում, գների ստուգում
և այլն. Նմանորինակ հանձնարարու-
թյունները պիտի կատարել առանց
ուշացնելու:

15. Խանութային հանձնաժողովները
պիտի ամեն կերպ ոժանդակեն անդա-
մագրության աշխատանքներին:

16. Խանութային հանձնաժողովների
կողմից հայտարերված թերություններն,
անկարգությունները և նրանց վերաց-
ման ձևերը, վորոնք աջակցության կար-

գով տրվում են և. Հ. կողմից, սակայն
խանութի վարիչի կամ պատգործակա-
տարի կողմից չեն կիրառվում, նման
գեպքում պիտի հարց հառուցել վար-
չության առաջ:

Ծանոթություն. — Խանութային
հանձնաժողովները իրավունք չու-
նեն փոփոխման յենթարկելու վար-
չության վրոշումները:

17. Առնվազն յերկու շաբաթը մեկ
ամսամ հրավիրել խանութային հանձ-
նաժողովի նիստ: Բացի այդ, պիտի մր-
տածել նաև կոնֆերանսներ և պլենում-
ներ կազմելու մասին:

Ի՞՞ջգիՍԻ ԽՆԴԻՐՆԵՐ ԴՆԵԼ ՀՐԱ-
ՎԻՐՎԱԾ ՆԻՍՏԵՐՈՒՄ ԿՍՄ ՊԼԵ-
ՆՈՒՄՆԵՐՈՒՄ.

Առաջին դեպքում պիտի լսել խա-
նութային հանձնաժողովի ինֆորմա-

ցիան՝ խանութի ամեն տեսակի բացասական ու ցավոտ լերեռւթների մասին (ապրանքների փչացման, անկանոն դասավորման, թափթլվիվածության անտնտեսավարության, կոպտության, զեղծարարության և այլն), և այդ կապել նոր առաջադրությունների, նոր ձևերի հետ) ուացիոնալացման, ապարատի պարզեցման և այլն:

Յերկրորդ դեպքում պիտի լսել վարչության գեկուցումը՝ կապված խ. հ. անելիքների հետ:

Ծանոթություն.— Խանութային հանձնաժողովներն աշխատում են ձրի՝ հասարակական պարտականության կարգով:

18. Վատնումներ կամ յուրացումներ հայտաբերելու դեպքում խանութային հանձնաժողովները պարտավոր են շտապ

կերպով տեղյակ դարձնել վարչությանն ու վերստրուգիչ հանձնաժողովին:

1. Ծանոթություն.— Խանութային հանձնաժողովները ընտրվում են՝ ձեռնարկությունների, կոլեկտիվների, հիմնարկների և քաղաքամասների ընկերության անդամների կողմից, ուստի հաշվետույթն իրենց ընտրողների սուած. հաշվետիություններ պիտի կազմել առնվազն յերկու ամիսը մեկ անգամ:

2. Ծանոթություն.— Խանութային հանձնաժողովներն իրավունք ունեն ծանոթանալու խանութին վերաբերվող բոլոր գրություններին՝ վարչության կողմից ուղարկված գրություններին, հրահանգներին, շրջաբերականներին, զա-

նազան մանր մունք գըռություններին և խանութալին հաշվետվություններին:

21. Այն դեպքում, յերբ խանութալին հանձնաժողովի նիստ և հրավիրվում, և ժողովի ընթացքում վիճելի հարցեր են ծագում, այդ հարցերը պիտի փոխադրել կտղմ. կոլեգիալի նիստին՝ տաղածախությունները հարթելու նպատակով:

22. Պիտի անհրաժեշտ համարել խանութային հանձնաժողովի ներկայությունը՝ խանութի սոցմշցման և հարգածայնության պայմանագրեր կնքելուն և նրանց կողմից հետևելը պայմանագրերի ճիշտ կիրառմանը:

23. Հետեւել, վոր գների տախտակը, բողոքի արկղը, և գիրքը լինեն իրենց

տեղերում: Պիտի շտապեցնել բողոքների պատասխան ստանալը: Խանութալին հանձնաժողովները պիտի ունենան աշխատանքների հետեւյալ բաժանումը:

Բնտրվում են նախազան և քարտուդար:

Նախազանի պարտականությունների մեջ են մտնում՝ հետևել խանութալին հանձնաժողովների անդամների հերթապահության կանոնագոր լինելուն:

24. Պատրաստել հերթապահության ցուցակ և կախել խանութի աջքի ընկնող տեղում:

25. Հրավիրել նիստեր և պարտադրել, վոր բոլոր անդամները ներկա լինեն:

Ծանոթություն.—Յեթե խանութային հանձնաժողովի անդամը 3 անգամ բացակայում և նիստերից

CA 32-1
34

734

և բացակայության համար չի ներ-
կայացնում հարգելի պատճառա-
բանություն, նախագահը պարտա-
վոր ե հայտնել Բանկոսպի վարչու-
թյանը, իսկ վերջինս՝ այն կոլեկ-
տիվին, վորտեղից նրան ընտրել են:
26. Խանութային հանձնաժողովի նա-
խագահը պարտավոր ե կազմել հաշվե-
տվություն՝ տարած աշխատանքների
մասին և ներկայացնել համապատաս-
խան մարմիններին:

БИБЛИОТЕКА
ИНСТИУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

«Ազգային գրադարան



NL0203248

16

